Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-1071-14.01.2011-ՊԱ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԿԱՅԱԶՈՐԱՅԻՆ ՈՒ ՊԱՀԱԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԳԻՐՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. <<Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կայազորային ու պահակային ծառայությունների կանոնագիրքը հաստատելու մասին>> Հայաստանի Հանրապետության 1996 թվականի դեկտեմբերի 3-ի ՀՕ-98 օրենքի (այսուհետ՝ օրենք) 3-րդ հոդվածում <<կայազորային ծառայության>> բառերը փոխարինել <<կայազորների>> բառով, իսկ <<տեղադրման կետերից>> բառերը փոխարինել <<տեղակայման վայրերից>> բառերով:

Հոդված 2. Օրենքի 8-րդ հոդվածում <<զինվորների>> բառը փոխարինել <<զինծառայողների>> բառով:

Հոդված 3. Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասում <<Հայաստանի Հանրապետության պետական կառավարման լիազորված մարմնի ղեկավարի (նախարարի) առաջին տեղակալներից որևէ մեկը>> բառերը փոխարինել <<Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի պետի առաջին տեղակալը>> բառերով:

Հոդված 4. Օրենքի 13-րդ հոդվածում <<Հայաստանի Հանրապետության պետական կառավարման լիազորված մարմնի (նախարարության)>> բառերը փոխարինել <<Հայաստանի Հանրապետության զինված ուժերի>> բառերով:

Հոդված 5. Օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ պարբերությունում, 23-րդ հադվածին հաջորդող վերնագրում, 24-րդ հոդվածի 1-ին նախադասությունում <<ճառագայթային>> բառը փոխարինել <<ռադիացիոն>> բառով:

Հոդված 6. Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասում <<Հայաստանի Հանրապետության պետական կառավարման լիազոր մարմնին (նախարարին)>> բառից հետո լրացնել <<, ինչպես նաև ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետին>> բառերը:

Հոդված 7. Օրենքի 17-րդ հոդվածի՝

1. 4-րդ պարբերությունում <<պետական կառավարման լիազորված մարմնի ղեկավարի (նախարարի)>> բառերը փոխարինել <<ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի>> բառերով,

2. 8-րդ պարբերությունում <<հակաօդային պաշտպանությունը և>> բառերը հանել,

3. 10-րդ պարբերությունում <<ցուցումով>> բառից առաջ լրացնել <<, ինչպես նաև ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի>> բառերը,

4. 11-րդ պարբերությունում <<մարդկանց լողանալու>> բառերը փոխարինել <<զինծառայողների լողալու>> բառերով:

Հոդված 8. Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին նախադասությունում <<տեղակալներին>> բառից հետո լրացնել <<, Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի պետին>> բառերը:

Հոդված 9. Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին պարբերությունում, 22-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ պարբերությունում <<արդարադատության>> բառը փոխարինել <<իրավապահ>> բառով:

Հոդված 10. Օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ պարբերությունում <<զորամասը>> բառը փոխարինել <<զորամասերն>> բառով:

Հոդված 11. Օրենքի 30-րդ հոդվածում <<բնակավորման>> բառից հետո <<գլխավոր>> բառը հանել:

Հոդված 12. Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի՝

1. 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

<<- անձամբ կամ իր օգնականների միջոցով դիմավորել կայարան (օդանավակայան) ժամանած մարդատար գնացքները (ինքնաթիռը), զինվորական էշելոնները կամ պահակախմբերի ուղեկցությամբ եկած զինվորական բեռնատրասպորտը, ստուգել դրանցում գտնվող զինծառայողների կարգապահությունը, նյութակենցաղային վիճակը, ինչպես նաև սպառազինության, ռազմական տեխնիկայի, նյութական միջոցների և այլ բեռների ամրակալման ապահովությունը,>>,

2. 3-րդ պարբերությունում <<բեռնել և>> բառերը հանել, իսկ <<զինծառայողներին>> բառից հետո լրացնել <<և բերման ենթարկել>> բառերը:

Հոդված 13. Օրենքի 34-րդ հոդվածում <<սենյակների>> բառը փոխարինել <<սենյակներ>> բառով:

Հոդված 14. Օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասում <<և պահակության>> բառը փոխարինել <<ու պահակային ծառայությունների>> բառերով:

Հոդված 15. Օրենքի 38-րդ հոդվածի՝

1. 3-րդ պարբերությունում <<շուրջօրյա>> բառը հանել, իսկ <<տեղադրման>> բառը փոխարինել <<տեղաբաշխման>> բառով,

2. 6-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<-ոչ պակաս, քան ամիսը 2 անգամ անձամբ ստուգել կայազորի վերակարգում նշանակված ստորաբաժանումների և անձանց նախապատրաստվելը, փոխարինումը և կայազրային պահակախմբերի, պարեկների, զինվորական ավտոտեսչության հսկիչ կետերի կողմից ծառայության կատարելը, կայազորի հերթապահ տորաբաժանման պատրաստականությունը, ինչպես նաև պահակակետերի և պահակատների վիճակը,>>,

3. 11-րդ պարբերությունում <<պահակների>> բառը փոխարինել <<պարեկների>> բառով,

4. 14-րդ պարբերությունում <<ներքին գործերի>> բառերը փոխարինել <<ոստիկանության>> բառով,

5. 18-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<- կայազորի պետի ցուցումով զորամասերի միջև բաշխել զորքերի ջրամատակարարման բաց ջրամբարները և առանձնացնել լողալու տեղերը, հսկողություն սահմանել լողալու տեղերը սարքավորելու, ինչպես նաև փրկարար լողորդների հերթապահ խմբերի և հերթապահ բուժակների (սանիտարական հրահանգիչների) ծառայությունը կազմակերպելու և անցկացնելու նկատմամբ,>>:

Հոդված 16. Օրենքի 41-րդ հոդվածի՝

1. 1-ին մասում <<մինչև երեք օր>> բառերը փոխարինել <<մինչև 72 ժամ>> բառերով,

2. 2-րդ մասում <<կարգապահական մեկուսարանում՝ այստեղ մեկուսացվածների գրքում>> բառերը փոխարինել <<, ինչպես նաև կարգապահական մեկուսարանի մեկուսացվածների գրքում>> բառերով:

Հոդված 17. Օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասում <<եղբայրներ>> բառից հետո լրացնել <<պապ և տատ>> բառերը:

Հոդված 18. Օրենքի 45-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ պարբերությունում <<ըստ շտապ զեկուցագրերի հաշվետախտակի>> բառերը փոխարինել <<ըստ սահմանված կարգի>> բառերով:

Հոդված 19. Օրենքի 46-րդ հոդվածի՝

1. 1-ին մասում <<կարգուկանոնը>> բառը փոխարինել <<կարգը>> բառով,

2. 3-րդ մասի 1-ին պարբերությունում <<փաստաթղթերը>> բառը փոխարինել <<փաստաթղթերի>> բառով,

3. 3-րդ մասի 15-րդ պարբերությունը շարդրել հետևյալ խմբագրությամբ.

<<- դիմավորել կայազորի պետին, նրա ուղղակի պետերին, կայազորի պետի տեղակալներին, զինվորական պարետին, ինչպես նաև զորքերի հրահանգավորումը (ստուգումը) ղեկավարելու եկածներին, նրանց

հանձնարարությամբ եկած տեսչական (ստուգող) խմբի սպներին, ներկայանալ նրանց և ուղեկցել կարգապահական մեկուսարանի տնօրինության տակ գտնվող տարածքում:>>:

Հոդված 20. Օրենքի 51-րդ հոդվածում, 54-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին պարբերությունում, 216-րդ հոդվածի 1-ին մասում <<նշանաբանները>> բառը փոխարինել <<նշանաբառերը>> բառով:

Հոդված 21. Օրենքի 54-րդ հոդվածի՝

1. 2-րդ մասի 3-րդ պարբերությունում <<պահակակետերին>> բառը փոխարինել <<պահակապետերին>> բառով,

2. 2-րդ մասի 5-րդ պարբերությունում <<գնալու>> բառը փոխարինել <<գտնվելու>> բառով,

3. 2-րդ մասի 9-րդ պարբերությունում <<(հոդվածներ 257,258)>> բառը փոխարինել <<(հոդված 258)>> բառով

4. 3-րդ մասում <<հերթապահի>> բառը փոխարինել <<հերթապահ>> բառով:

Հոդված 22. Օրենքի 84-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ պարբերությունում, 14-րդ պարբերությունում, 87-րդ հոդվածի 5-րդ պարբերությունում <<պետական ավտոտեսչություն>> բառերը փոխարինել <<ճանապարհային ոստիկանություն>> բառերով՝ համապատասխան հոլովվածներով:

Հոդված 23. Օրենքի 90-րդ հոդվածի 2-րդ պարբերությունում, 6-րդ պարբերությունում <<պետավտոտեսչությունում>> և <<պետավտոտեսչության>> բառերը փոխարինել համապատասխանաբար <<ճանապարհային ոստիկանության>> և <<ճանապարհային ոստիկանությունում>> բառերով:

Հոդված 24. Օրենքի 93-րդ հոդվածի 2-րդ մասում <<մյուս ստորաբաժանումներից>> բառերը փոխարինել <<մշտական տեղակայման վայրից>> բառերով, իսկ <<ունեցող>> բառից հետո <<օգնականին>> բառը փոխարինել <<գումարտակի հերթապահին>> բառերով:

Հոդված 25. Օրենքի 97-րդ հոդվածի 1-ին մասում <<պարեկներ>> բառը փոխարինել <<պահակայիններ>> բառով:

Հոդված 26. Օրենքի 98-րդ հոդվածում <<քնից արթնացած>> բառերը փոխարինել <<արթուն>> բառով, <<պահակային>> բառը փոխարինել <<պահակայինների>> բառով, իսկ <<ստեղծվում>> բառը փոխարինել <<կազմվում>> բառով:

Հոդված 27. Օրենքի 99-րդ հոդվածի՝

1. 1-ին մասում <<զինված>> բառից հետո լրացնել <<, ինչպես նաև կապի միջոցներ բառերը>>,

2. 2-րդ մասում <<պարունակում>> բառը փոխարինել <<պահունակում>> բառով:

Հոդված 28. Օրենքի 100-րդ հոդվածի 1-ին մասում <<մեկնելուց առաջ>> բառերից հետո լրացնել <<, տագնապի դեպքում,>> բառերը:

Հոդված 29. Օրենքի 102-րդ հոդվածի 3-րդ մասում <<(զետեղելու)>> բառը փոխարինել <<(համալրելու)>> բառով:

Հոդված 30. Օրենքի 104-րդ հոդվածը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ,

<<Պահակատների և պահակակետերի ապահովումը սարքավորումներով, պահպանության տեխնիկական և կապի միջոցներով, ինչպես նաև պահպանվող օբյեկտների ցանկապատը (հավելվածներ 5 և 6) և սույն կանոնագրքով նախատեսված գույքով ապահովելու պատասխանատվությունը դրվում է ռազմական օբյեկտի պետի (զորամասի հրամանատարի վրա):>>:

Հոդված 31. Օրենքի 105-րդ հոդվածի՝

1. ամբողջ տեքստում, 120-րդ հոդվածի 4-րդ մասում, 145-րդ հոդվածում, 218-րդ հոդվածում, 219-րդ հոդվածի 1-ին մասում, 231-րդ հոդվածում <<նշանաբան>> բառն իր բոլոր հոլովաձևերով փոխարինել <<նշանաբառ>> բառի համապատասխան հոլովաձևերով,

2. 4-րդ մասում <<պահակակետ>> բառը փոխարինել <<պահակատուն>> բառով:

Հոդված 32. Օրենքի 108-րդ հոդվածի՝

1. ամբողջ տեքստում <<կայարանների>> և <<կայանրանները>> բառերը փոխարինել համապատասխանաբար <<կայանատեղերի>> և <<կայանատեղերը>> բառերով,

2. <<ավիացիայի>> բառից հետո լրացնել <<վարչության>> բառը:

Հոդված 33. Օրենքի 121-րդ հոդվածի 5-րդ մասում <<ծրագրում>> բառը փոխարինել <<ծրարում>> բառով:

Հոդված 34. Օրենքի 122-րդ հոդվածի 4-րդ մասում <<նշանակվում>> բառից հետո <<որևէ>> բառը հանել:

Հոդված 35. Օրենքի 124-րդ հոդվածի 2-րդ մասում <<պահեստարանի>> բառից հետո լրացնել <<կայանատեղերի և այլնի>> բառերը:

Հոդված 36. Օրենքի 126-րդ հոդվածի 2-րդ մասում <<ընդունել,>> բառից հետո լրացնել <<ինչպես նաև երդում տալուց կամ այլ զորամասից տեղափոխվելուց հետո առնվազն մեկ ամիս չեն ծառայել,>> բառերը:

Հոդված 37. Օրենքի 129-րդ հոդվածի՝

1. 1-ին մասում <<հրամանատարը>> բառից հետո <<և>> տառը փոխարինել <<կամ>> բառով,

2. 2-րդ մասի 3-րդ պարբերությունում <<պահակախմբի կազմ մտնելու>> բառերը փոխարինել <<պահակային ծառայություն ստանձնելու>> բառերով,

3. 5-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

<<Պահակային ծառայությունը մեկ երկու օրը մեկ տանող պահակախմբերի նախապատրաստման առաջին և երկրորդ փուլերի միջոցառումների անցկացման ժամանակը սահմանում է զորմասի հրամանատարը այն հաշվով, որպեսզի չիջնի պահակախմբերի պատրաստման որակը:>>:

Հոդված 38. Օրենքի 130-րդ հոդվածի՝

1. 2-րդ պարբերությունում <<պատրաստման>> բառը փոխարինել <<նախապատրաստման>> բառով,

2. 3-րդ պարբերությունում <<հարդարման պիտույքների>> բառերը փոխարինել <<անձնական հիգիենայի պարագաների>:

Հոդված 39. Օրենքի 131-րդ հոդվածի 2-րդ նախադասությունում <<Այդ ժամանակ>> բառերը փոխարինել <<Մինչ այդ>> բառերով:

Հոդված 40. Օրենքի 132-րդ հոդվածում <<ուղարկվում է>> բառից հետո լրացնել <<զորամասի>> բառը:

Հոդված 41. Օրենքի 6-րդ գլխի վերնագրում <<ԱՆԴԱՄՆԵՐԻ>> բառը փոխարինել <<ԱՆՁՆԱԿԱԶՄԻ>> բառով:

Հոդված 42. Օրենքի 133-րդ հոդվածի 1-ին մասում <<ցուցակով>> բառը փոխարինել <<գույքացուցակով>> բառով:

Հոդված 43. Օրենքի 139-րդ հոդվածի 2-րդ մասում <<219>> թիվը փոխարինել <<249>> թվով:

Հոդված 44. Օրենքի 143-րդ հոդվածի 1-ին մասում <<և վաշտի (մարտկոցի)>> բառերից հետո <<բոլոր անմիջական>> բառերը փոխարինել <<հրամանատարի բոլոր ուղղակի>> բառերով:

Հոդված 45. Օրենքի 146-րդ հոդվածում <<պահակների>> բառը փոխարինել <<պահակայինների>> բառով, իսկ <<պահակապետերի>> բառը փոխարինել <<պահակակետերի>> բառով:

Հոդված 46. Օրենքի 147-րդ հոդվածի 5-րդ պարբերությունում <<պահակությանը>> բառը փոխարինել <<պահակախմբին>> բառով:

Հոդված 47. Օրենքի 150-րդ հոդվածի՝

1. 1-ին մասում <<ընթերաններ>> բառը փոխարինել <<օգնականներ>> բառով,

2. 2-րդ մասում <<պահակապետերին>> բառը փոխարինել <<ստորաբաժանման հրամանատարներին>> բառերով:

Հոդված 48. Օրենքի 152-րդ հոդվածի 3-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝

<<- ժամանակացույցի համաձայն անձամբ ստուգել պահպանության տեխնիկական միջոցների սարքինությունը և այդ նպատակով պահպանության տեխնիկական միջոցների գծով պահակապետի օգնականին (օպերատորին) ուղարկել ծառայության ազդանշաններն ընդունող սարքավորման մոտ,>>:

Հոդված 49. Օրենքի 155-րդ հոդվածի 2-րդ մասում <<140>> թիվը փոխարինել <<142>> թվով:

Հոդված 50. Օրենքի 158-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունում <<պահակատան ցուցակին>> բառերը փոխարինել <<պահակատանը գտնվող ցուցակին>> բառով:

Հոդված 51. Օրենքի 159-րդ հոդվածի 3-րդ մասում <<կարելի է>> բառը փոխարինել <<թույլատրվում է>> բառով:

Հոդված 52. Օրենքի 160-րդ հոդվածի 2-րդ մասում <<չի տրվել>> բառերը փոխարինել <<չի հանձնվել>> բառերով:

Հոդված 53. Օրենքի 161-րդ հոդվածի 1-ին մասում <<կանոններին>> բառը փոխարինել <<համապատասխան հրահանգին>> բառով:

Հոդված 54. Օրենքի 164-րդ հոդվածի՝

1. 2-րդ պարբերությունում <<պահակախմբի>> բառը փոխարինել <<պահակախմբերի>> բառով,

2. 3-րդ պարբերությունում <<հին պահակախումբը>> բառերը փոխարինել <<պահակախմբերի>> բառով,

3. 4-րդ պարբերությունում <<մաշվածության>> բառը փոխարինել <<խափանման>> բառով,

4. 5-րդ պարբերությունում <<խնամքի>> բառը փոխարինել <<պահելու>> բառով:

Հոդված 55. Օրենքի 174-րդ հոդվածի 4-րդ պարբերությունում <<297>> թիվը հանել:

Հոդված 56. Օրենքի 175-րդ հոդվածի՝

1. 1-ին պարբերությունում, 200-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությունում <<տեղադրման>> բառը փոխարինել <<տեղաբաշխման>> բառով,

2. 2-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<- հետևել, որ ժամապահը և պահակակետն ընդունող պահակայինը ճիշտ կատարեն հանձնումը և ընդունումը, ժամապահի և պահակակետն ընդունող պահակայինի հետ միասին անձամբ ստուգել լուսավորության, ցանկապատերի, դռների (դարպասների) սարքինությունը, պահեստարանների (պահեստների) վանդակացանցերի և պատերի վիճակը, կողպեքների, լարերի, կնիքների (կապարակնիքների) առկայությունը և դրանց համապատասխանությունը ծեփապատճեներին (դրոշմվածքներին) կամ պահպանության տակ գտնվող մարտական մեքենաների (այլ զենքերի ու ռազմական տեխնիկայի) քանակությունը, ինչպես նաև պահպանության տեխնիկական միջոցների, կապի, հրդեհաշիջման միջոցների և պահակային համազգեստի առկայությունն ու վիճակը,>>:

Հոդված 57. Օրենքի 183-րդ հոդվածի 5-րդ պարբերությունում <<ցուցանիշներով>> բառը փոխարինել <<ցուցանակներով>> բառով:

Հոդված 58. Օրենքի 184-րդ հոդվածի 1-ին նախադասությունում <<ունենա>> բառից հետո լրացնել <<լիցքավորված,>> բառը, իսկ <<գոտեփոկի վրա)>> բառերից հետ լրացնել <<, ինչպես նաև կապի միջոց>> բառերը:

Հոդված 59. Օրենքի 188-րդ հոդվածի՝

1. 1-ին մասում <<կարգապահական մեկուսարան>> բառը փոխարինել <<պահակատուն>> բառով,

2. 4-րդ մասում <<անծանոթ>> բառը փոխարինել <<ինքը չէ>> բառով:

Հոդված 60. Օրենքի 189-րդ հոդվածում <<բռնատեղով>> բառը փոխարինել <<խզակոթով>> բառով:

Հոդված 61. Օրենքի 197-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ պարբերությունում <<պահակադիներին>> բառը փոխարինել <<իր պահակադիրին>> բառերով:

Հոդված 62. Օրենքի 198-րդ հոդվածի՝

1. 1-ին մասը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

<<Պահակատան մուտքի մոտ կանգնած ժամապահը պարտավոր է պահպանել ու պաշտպանել պահակատունը, թույլ չտալ, որ որևէ մեկը մոտենա, բացի այն անձանցից , որոնց պահակախումբը ենթարկվում է, գիտի դեմքով և այն անձանցից, որոնք նրան ուղեկցում են,>>,

2. 2-րդ մասում <<պահակակայաններին>> բառը փոխարինել <<պահակախմբին՝ կատարելու հանձնարարված առաջադրանքը>>:

Հոդված 63. Օրենքի 201-րդ հոդվածի 2-րդ մասի՝

1. 1-ին պարբերությունում <<տեղակալի>> բառը փոխարինել <<օգնականի>> բառով,

2. 2-րդ պարբերությունում <<չխառնվեն>> բառը փոխարինել <<չշփվեն>> բառով:

Հոդված 64. Օրենքի 203-րդ հոդվածի 1-ին նախադասությունը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝

<<Պահակախմբերի փոխարինման նպատակն է ստուգել ծառայությունը կատարելու համար պահակախմբերի պատրաստությունը, սույն օրենքի 93-րդ հոդվածում նշված անձանց ենթակայությանն անցնելը և նոր պահակախմբերին իրավունք վերապահել հերթափոխել հին պահակախմբերին:>>:

Հոդված 65. Օրենքի 205-րդ հոդվածի 2-րդ մասում <<, իսկ>> բառը փոխարինել <<կամ>> բառով:

Հոդված 66. Օրենքի 208-րդ հոդվածի 1-ին մասում <<իրենց հրամանների>> բառերը փոխարինել <<իրենց համարների>> բառերով:

Հոդված 67. Օրենքի 216-րդ հոդվածի 2-րդ մասում <<պահակատների պահակների>> բառերը փոխարինել <<պահակակետերի պահակայինների>> բառերով:

Հոդված 68. Օրենքի 218-րդ հոդվածում <<տեղադրված>> բառը փոխարինել <<տեղակայված>> բառով:

Հոդված 69. Օրենքի 221-րդ հոդվածի 1-ին մասում <<ԿԱՆԳՆԻՐ>> բառը փոխարինել <<ՇԱՐՎԻՐ>> բառով:

Հոդված 70. Օրենքի 223-րդ հոդվածի 2-րդ մասում, 234-րդ հոդվածի 4-րդ մասում <<պահակախմբերի>> բառը փոխարինել <<պահակախմբի>> բառով:

Հոդված 71. Օրենքի 224-րդ հոդվածի 1-ին մասում <<դրվելուց>> բառը փոխարինել <<կարգելուց>> բառով, իսկ << ուղարկում>> բառը փոխարինել <<ուղեկցում>> բառով:

Հոդված 72. Օրենքի 229-րդ հոդվածի 2-րդ մասում <<(կամ պատահել է այս-այս):>> բառերից հետո լրացնել <<Պահակապետ՝>> բառը:

Հոդված 73. 231-րդ հոդվածում՝

1. 2-րդ մասում <<հին>> բառը փոխարինել <<նոր>> բառով,

2. լրացնել նոր մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

<<Նոր պահակապետը հերթափոխի համար պահակատուն ներկայանալով բացում է տագնապային ծրարը, ճշտում է պահակախմբի խնդիրները, լրացնում է պահակակետերի տեղեկագիրը, անհրաժեշտության դեպքում պահակադիրներին և պահակայիններին բացատրում է ժամապահների հատուկ պարտականությունները և սկսում է հերթափոխը:>>:

Հոդված 74. Օրենքի 234-րդ հոդվածի 4-րդ մասում <<ստացողին>> բառը փոխարինել <<ընդունողին>> բառով:

Հոդված 75. Օրենքի 235-րդ հոդվածի երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

<<Նշված դեպքերում պահակակետի ընդունմանը և հանձնմանը մասնակցում են պահակակետն ընդունող և պահակակետը հանձնող պահակապետերը:>> :

Հոդված 76. Օրենքի 236-րդ հոդվածի առաջին նախադասությունում <<ստանձնող>> բառը փոխարինել <<ընդունող>> բառով, իսկ <<պահակադիրը>> բառը փոխարինել <<իրենց պահակադիրներին>> բառերով:

Հոդված 77. Օրենքի 238-րդ հոդվածի 1-ին մասում <<ուսին>> բառից հետո լրացնել <<(ավտոմատի դեպքում՝ Փոկին-ԱՌ)>>, բառերը:

Հոդված 78. Օրենքի 8-րդ գլխի վերնագրում <<ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ>> բառը փոխարինել <<ԿԱՐԳՈՒԿԱՆՈՆԸ>> բառով:

Հոդված 79. Օրենքի 244-րդ հոդվածի 2-րդ մասում <<Պաշտպանության>> բառը փոխարինել <<Պահպանության>> բառով, <<ծառայում>> բառը փոխարինել <<ստանձնում պահակային ծառայություն>> բառերով, իսկ <<աշխատանքին>> բառը փոխարինել <<ծառայությանը>> բառով:

Հոդված 80. Օրենքի 245-րդ հոդվածի՝

1. 1-ին մասում <<զինանոցի պահարաններին>> բառերը փոխարինել <<զինաբուրգում>> բառով,

2. 4-րդ մասում <<արձակուրդի>> բառը փոխարինել <<հանգստի>> բառով,

3. 6-րդ մասում <<զինանոցի պահարանից>> բառերը փոխարինել <<զինաբուրգից>> բառով:

Հոդված 81. Օրենքի 248-րդ հոդվածի 1-ին մասում <<Առանց կոշիկների, չհանելով>> բառերը փոխարինել <<Չհանելով կիսաճտքավոր կոշիկները,>> բառերով:

Հոդված 82. Օրենքի 249-րդ հոդվածի 3-րդ մասում <<պահակատանն է մնում,>> բառերից հետո <<իսկ պահակատներում, որտեղ նրանք չկան, պահակայիններից որևէ մեկը,>> բառերը հանել:

Հոդված 83. Օրենքի 250-րդ հոդվածի 1-ին մասում <<Կայազորային, ինչպես նաև զորամասի ենթակայությունից>> բառերը փոխարինել <<Կայազորի, ինչպես նաև զորամասի տարածքից (մշտական տեղակայված վայրից) բառերով:

Հոդված 84. Օրենքի 255-րդ հոդվածի 1-ին մասում <<98>> թիվը փոխարինել <<93>> թվով:

Հոդված 85. Օրենքի 257-րդ հոդվածի 1-ին մասում <<նշանակվել են խմբերը>> բառերը <<նշակակել են պահակախմբերը>> բառերով:

Հոդված 86. Օրենքի 268-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունում <<նրա>> բառը փոխարինել <<նրան>> բառով:

Հոդված 87. Օրենքի 271-րդ հոդվածում <<անցաբառի>> բառը փոխարինել <<նշանաբառի>> բառով:

Հոդված 88. Օրենքի 275-րդ հոդվածի 2-րդ մասում <<եռահամակարգ>> բառերը փոխարինել <<եռահերթափոխով>> բառերով:

Հոդված 89. Օրենքի 300-րդ հոդվածի 1-ին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ.

<<Ավտոմեքենաներով փոխադրվող բեռը պահպանվում է 290-296-րդ հոդվածների պահանջներին համապատասխան:>>:

Հոդված 90. Օրենքի 330-րդ հոդվածի՝

1. 1-ին մասում <<ընթերակաները>> բառը փոխարինել <<օգնականները>> բառով,

2. 2-րդ մասում <<Դիմավորող>> բառը փոխարինել <<Դիմավորվող>> բառով, իսկ <<(ձախ, կենտրոն):>> բառերից հետո <<<<ՀԱՎՍԱՐ>>>> բառը հանել:

Հոդված 91. Օրենքի 345-րդ հոդվածի 3-րդ մասում <<«Ուսին ԱՌ» դիրքով>> բառերից հետո լրացնել <<, դագաղը ավտոմեքենայի վրա տեղափոխելիս ժամապահները նստած դիրքում զենքը դնում են ծնկների արանքում և երկու ձեռքով բռնում, իսկ կանգնած դիրքում ավտոմատը կրում են «Կրծքին ԱՌ» դիրքով, իսկ կարաբինը՝ «Ոտքին ԱՌ» դիրքով:>> բառերը:

Հոդված 92. Օրենքի հավելված 3-ում <<ՀՈԴՎԱԾՆԵՐ>> բառից հետո <<121>> թիվը փոխարինել <<120>> թվով:

Հոդված 93. Օրենքի հավելված 5-ի 9-րդ կետ՝

1. առաջին նախադասություն ում <<պահակային հագուստը>> և <<շինելի>> բառերը փոխարինել <<պահակային համազգեստի>> բառերով, իսկ <<պահակակետի խուց>> բառերը փոխարինել <<պահակակետի ծածկասունկ>> բառերով,

2. երկրորդ նախադասությունում <<պահակակետի խուցը ներկրվում է>> բառերը փոխարինել <<պահակակետի ծածկասունկը ներկվում է>> բառերով:

Հոդված 94. Օրենքի հավելված 6-ի՝

1. 2-րդ մասի 12-րդ պարբերությունում <<զինադարակ>> բառը փոխարինել <<զինաբուրգ>> բառով,

2. 3-րդ մասի 18-րդ պարբերությունում <<արկղով>> բառը փոխարինել <<դարակով>> բառով,

3. 4-րդ մասում <<և պահակախմբի մյուս անձանց միաժամանակյա հանգստի հաշվով (ում որ 243-րդ հոդվածով նախատեսված է հանգստանալ):>> բառերը փոխարինել <<, ինչպես նաև սույն օրենքի 248-րդ հոդվածով նախատեսված պահակախմբի մյուս անձանց միաժամանակյա հանգստի հնարավորությունն ապահովելու համար, սենյակը պետք է ունենա կապույտ գույնի հերթապահ լուսավորություն, իսկ սենյակի պատուհանների վրա կախված լինեն լուսաքողարկող սև վարագույրներ:>> բառերը:

Հոդված 95. Օրենքի հավելված 7-ի ծանոթության 1-ին մասում <<Փամփուշների առգրավման>> բառերը փոխարինել <<Փամփուշտները վերցնելու>> բառերով,

Հոդված 96. Օրենքի հավելված 9-ի ծանոթության 2-րդ կետում լրացնել նոր նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ.

<<Ամպրոպի և կայծակի դեպքում ժամապահին թույլատրվում է զենքը և մետաղական այլ իրերը դնել 3-4 մետր հեռավորության վրա՝ չթուլացնելով զգոնությունը:>>:

Հոդված 97. Օրենքի հավելված 10-ի 1-ին ենթավերնագրում <<Ուսման>> բառը փոխարինել <<Ուսուցման>> բառով:

Հոդված 98. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: